ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2019թ. դեկտեմբերի 18-ից 19-ը Թբիլիսի (Վրաստան)՝ շրջակա միջավայրի նախարարի տեղակալ Իրինա Ղափլանյանի գործուղման վերաբերյալ

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**

   Իրինա Ղափլանյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

   Շրջակա միջավայրի նախարարի տեղակալ

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ**

   Թբիլիսի (Վրաստան)

   2019թ. դեկտեմբերի 18-ից 19-ը

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

   Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոն (ԿՏԲԿ):

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**

   Մասնակցություն՝ Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոնի ղեկավար խորհրդի հանդիպմանը:

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ, ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐ**

   Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոնն (ԿՏԲԿ) իրականացնում է մի շարք ծրագրեր, որոնց շնորհիվ հնարավոր կլինի հասնելու շրջակա միջավայրի աղտոտվածության ծավալների նվազեցման, արտադրական և տեխնոլոգիական կարիքների ծախսերի կրճատման, աշխատանքի արդյունավետության բարձրացման, ապրանքների որակի, ինչպես նաև արտադրության պայմանների, ընկերության կարգավիճակի և հասարակական կարծիքի բարելավման:

   Հանդիպման ընթացքում քննարկվեցին Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոնի (REC) 2018-2019թթ. գործողությունների ծրագիրն, ինչպես նաև ազգային, տարածաշրջանային ծրագրերը: Քննարկվել է նաև Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոնի համագործակցությունը դոնորների ու միջազգային կազմակերպությունների հետ:

Հանդիպման շրջանակներում ներկայացվել է ղեկավար մարմնի զեկույցը, որը հաստատվել է Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոնի (REC) տնօրենների կողմից:
Հանդիպման ընթացքում քննարվեցին հետևյալ կարևոր հարցերը.

- Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոնի (ԿՏԲԿ) ամենամյա ծրագրի գործունեության վերանայումը,
- Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոնի (ԿՏԲԿ) ֆինանսական վիճակը,
- Քննարկումներ և աուդիտորական հաշվետվության հաստատում,
- 2020 թվականի աշխատանքային ծրագրի ներկայացում,
- 2020 թվականի գործառնական բյուջեի ներակայացում,
- Ներկայացված փաստաթղթերի քննարկումները և հաստատումը,
- 2019-2025թթ. Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոնի (ԿՏԲԿ) տարածաշրջանային մարտահրավերների նախագծի ներկայացում:
- Ռազմավարական աջակցություն Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոնին (ԿՏԲԿ). Հիմնական ռազմավարական ուղղությունները և գործընկերությունները:

Խորհդի անդամները, որի կազմում է նաև եվրոմիության ներկայացուցիչը և երեք երկրների խորհրդի անդամները, հաստատեցին իրենց նշանակումները և գրանցվեցին Վրաստանի համապատասխան ռեգիստրում:

Հանդիպման ընթացքում քննարկվել են երեք պետությունների կողմից Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոնի (ԿՏԲԿ) հետ ավելի սերտ համագործակցության հարցերը, որը կարող է իրականացվել ոլորտային տարբեր ծրագրերի միջոցով:

3. ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հանդիպման ընթացքում ներկայացվեց Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոնի (ԿՏԲԿ) գործունեության ֆինանսական զեկույցը, քննարկվեցին ընդհանուր աուդիտի հարցերը: Աուդիտի վերջնական զեկույցը կներկայացվի 2020թ.-ին:
Քննարկվել և ընդունվել են Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոնի (ԿՏԲԿ) ռազմավարության փոփոխությունները և ռազմավարական փաստաթղթերը:

ԿՏԲԿ-ի առաքելությունն է աջակցել Հայաստանին Կովկասի երկրներում բնապահպանական խնդիրների լուծմանը, ստեղծել քաղաքացիական հասարակություն, ներգրավել բնակչությանը որոշումների կայացման

գործընթացում, ապահովել տեղեկատվության ազատ փոխանակում, աջակցություն ցուցաբերել ազգային և տարածաշրջանային հասարակական կազմակերպություններին, կառավարման համակարգին, բնակչությանը, ինչպես նաև այլ շահագրգիռ կողմերի միջև համագործակցությանը:

Շրջակա միջավայրի նախարարի տեղակալ

Իրինա Ղափլանյան